ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունվարի 2026 թվականի N 41-Ա

ՄԱՐՑ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐԱՐԱՏԻ ԱՖԻՑԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԻՐ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԳՆԱԿԱՆ (ՊԱՏՐՈՆ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի ,1-ին մասի,1-ին կետի, 24-րդ ենթակետի,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի, ՀՀ կառավարության <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության>> 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման դրույթների պահանջներով, հաշվի առնելով Թումանյանի համայնքապետարանի <<Խնամակալության և հոգաբարձության հարցերի հանձնաժողովի>> 2026թ. հունվարի 23-ի նիստի որոշումը և հիմք ընդունելով Մարց գյուղի 2-րդ փողոց, տուն.1 հասցեի բնակիչ Սուսաննա Արարատի Աֆիցարյանի / 14.01.2026թ.մտից թիվ 26/ դիմումը՝

Որոշում եմ.

1.Մարց գյուղի բնակչուհի Սուսաննա Արարատի Աֆիցարյանի /ծնված՝06.04.1957թ. անձնագիր՝ AX 0454576 տրված՝ 29.08.2024թ.-ին 055-ի կողմից/ խնդրանքով, որը վատառողջ լինելու պատճառով չի կարող ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները և կատարել պարտականությունները, իր համաձայնությամբ նրա նկատմամբ Տաթևիկ Բորիսի Սահակյանին/ ծնված՝01.04.1982թ. անձնագիր՝ AX 0556381 տրված՝ 27.11.2024 թ.-ին 018-ի կողմից/ նշանակել օգնական (պատրոն):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2026 թվականի N 42-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով , ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով ՀՀ Կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ին ենթակետով,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշումը, հիմք ընդունելով Լոռի-3 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը,Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու 24.09.2024թ. թիվ 87-Ա որոշումը,ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-16 դրական եզրակացությունը, ՀՀ Լոռու մարզպետի 2024թ. հոկտեմբերի 16-ի թիվ 823-Ա որոշումը և Արամ Արմենի Թումանյանի /մուտք՝29.01.2026թ. թիվ 42 /դիմումը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքի Դսեղ բնակավայրի 5-րդ փողոց թիվ 10/3 հասցեում գտնվող 06-035-0048-0025 (սեփականության իրավունքի վկայական N 04092025-06-0068) կադաստրային ծածկագրով արդյունաբերության,ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,01624 հա մակերեսով արդյունաբերական օբյեկտներ հողատեսքի չորանոց պահեստի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել այն փոխադրելով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության սպասարկման համալիրի և համապատասխանեցնել Լոռի-3 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությանը:
2.Սեփականության իրավունքով պետական գրանցում ստացած 53.12 քմ մակերեսով՝արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության ,տեսակը՝ չորանոց պահեստի նպատակային և գործառնական նշանակությունը համարել փոփոխված հասարակական նպատակային նշանակության. 53.12 քմ մակերեսով չորանոց պահեստը՝ որպես սպասարկման համալիր, և հասարակական նշանակության շինություն համաձայն ՀՀ Կառավարության 02.02.2002թ. 88-Ն որոշման դրույթների:
3.Շինությունների նպատակային նշանակությունները փոփոխվում են առանց քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման,քանի որ շին. աշխատանքներ չեն իրականացվել:
4. 06-035-0048-0025 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Դսեղ 5-րդ փողոց, 10/3 սպասարկման համալիր>> հասցե:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2026 թվականի N 43-Ա

ԳՐԵՏԱ ԴՈՒՐՄԻՇԻ ՇԻՄԱԼՅԱՆԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ) ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 64-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով <<Բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձի>> N 6321 վկայականը,Հայաստանի Հանրապետության դատախազության կողմից 30.12.1991թ. տրված N 13-816-41 տեղեկանքը, Լոռու մարզպետի 19.08.2025թ. թիվ 01/111.6/06914-2025 գրությունը, սեփականության իրավունքի N 19122025-06-0063 վկայականը,Թումանյան համայնքի ավագանու 24.12.2025թ. թիվ 105-Ա որոշումը և Գրետա Դուրմիշի Շիմալյանի /մուտք՝ 15.08.2025թ. թիվ 559/ դիմումը՝

Որոշում եմ.

1.Համայնքային սեփականություն հանդիսացող Շամուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-085-0045-0011 ծածկագրի 0,1 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը սեփականության իրավունքով անհատույց /նվիրատվության կարգով/օտարել Գրետա Դուրմիշի Շիմալյանին / ծնված՝ 18.06.1949թ./ բնակելի տուն կառուցելու համար:

2. Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2026 թվականի N 44-Ա

ԱՐԵՆ ԴԱՎԻԴԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 փետրվարի 14-ի թիվ 10-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 25122024-06-0058 վկայականը և 2026 թվականի հունվարի 27-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 1 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-071-0101-0052 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.16148 հա մակերեսով այլ հողատեսք 5250 /հինգ հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Արեն Դավիդի Ղազարյանին /ծնված՝ 02.01.1981թ/:
2. Արեն Դավիդի Ղազարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2026 թվականի N 45-Ա

ՎԱՍԻԼԻ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2025 ապրիլի 8-ի թիվ 29-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 24032025-06-0041 վկայականը և 2026 թվականի հունվարի 27-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 2 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-045-0178-0007 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0.31851 հա մակերեսով խոտհարք 40000 /քառասուն հազար / ՀՀ դրամ տարեկան վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Վասիլի Վարուժանի Ստեփանյանին /ծնված՝ 07.04.1966թ/:
2. Վասիլի Վարուժանի Ստեփանյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
4. Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2026 թվականի N 46-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Թումանյան համայնքի ավագանու 2025թ.նոյեմբերի 28-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 84-Ն որոշումը,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Արտակ Հենրիկի Սարգսյանի /մուտք 30.01.2026թ. թիվ 46/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0013-0028 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, ք. Թումանյան 3-րդ փողոց 4/2 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թ.
ք. Թումանյան